

«Հ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/4

5 մարտի 2013թ.

Քննարկվեց «ՎԱԲԱ» ՍՊԸ առարկությունները «Հ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 14.02.2013թ. թիվ 1104448 ստուգման ակտի դեմ:

Համաձայն «Հ ԿԱ ՊԵԿ նախագահի 25.01.2013թ. թիվ 1104448 հանձնարարագրի «Հ օրենսդրությամբ հարկային մարմնին վերնպահված իրավասության սահմաններում «ՎԱԲԱ» ՍՊԸ-ում կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը «Հ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության, հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում 14.02.2013թ-ին կազմվել է թիվ 1104448 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 956.528 դրամ:

«ՎԱԲԱ» ՍՊԸ առարկությունները վերաբերում են միայն ստուգման ակտի 3-րդ կետին, որով մասնավորապես արձանագրվել է.

համաձայն 25.01.2013 թ-ին կազմված արձանագրության, քաղաք Վանաձոր, Թումանյան 12 հասցեում «ՎԱԲԱ» ՍՊԸ-ն իրեն պատկանող «Վերնատուն» ռեստորանային համալիրում իրականացնում է հանրային սննդի գործունեություն ընդհանուր մակերեսով 510 ք.մ. սպասարկման տարածքով, սակայն համաձայն «Արտոնագրային վճարների մասին» «Հ օրենքի հավելված 8-ի 5-րդ կետի՝ ընկերության կողմից ներկայացված հայտարարությունով, նույն հավելվածի 6-րդ կետի, Վանաձորի ՏՀՏ-ի կողմից տրված 28.12.2012 թ-ի թիվ 44/281212001225 արտոնագրի 2013 թ-ի հունվար ամսվա համար որպես ելակետային տվյալ ցույց է տրվել 110 ք.մ.: Արդյունքում, ըստ նույն հավելվածի 9-րդ կետի, պակաս արտոնագրային վճար է հաշվարկվել և նույն հավելվածի 16-րդ կետի պահանջի վճարվել պետական բյուջե 448.500 դրամ, որը համաձայն «Արտոնագրային վճարների մասին» «Հ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակա է գանձման պետական բյուջե, ինչպես նաև տուգանք 50 տոկոսի չափով՝ 224.250 դրամ:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» «Հ օրենքի 23 և 25-րդ հոդվածների դրույթները, լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 746.528 դրամ:

«ՎԱԲԱ» ՍՊԸ առարկություններում մասնավորապես նշված է.

2013 թ-ի հունվարի 25-ին «Հ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 5-րդ բաժնի աշխատակիցների կողմից տեղում կատարված ուսումնասիրության հիման վրա կազմված արձանագրության մեջ նշված է, որ. «...ընկերության տնօրեն Լ.Բարաթյանը մեզ ներկայացրեց ռեստորանային համալիրի ելակետային տվյալների վերաբերյալ արտոնագիրը, որտեղ հանրային սննդի ելակետային տվյալների մեծությունը կազմում է 110 ք.մ., որը ընդգրկում է 4 առանձնացված սենյակ: Նշված ռեստորանային համալիրում առկա է նաև մոտ 400 ք.մ. հանդիսությունների սրահ, որտեղ տեղադրված էին թվով 11 հատ 10 տեղանոց սեղաններ, որոնք մեր այցելության պահին չէին սպասարկվում և սպասքներով կահավորված չէին»:

Այսպիսով, քանի որ վերը նշված 400 ք.մ. տարածքը հանրային սննդի գործունեության իրականացման համար նախատեսված չի եղել, ինչը նշված է նաև արձանագրության մեջ, հետևաբար դրա համար որևէ արտոնագրային ելակետ «Հ ներկայացնելու կարիք չի եղել և չի ներկայացվել՝ չխախտելով «Արտոնագրային վճարների մասին» «Հ օրենքի պահանջները:

Ելնուով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է անվավեր համարել 14.02.2013 թ-ի թիվ 1104448 ակտի 3-րդ կետը:

«Հ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, լսելով «ՎԱԲԱ» ՍՊԸ ներկայացուցչի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ

եզրակացության, որ ընկերության առարկությունները հիմնավոր են հետևյալ պատճառաբանությամբ:

<ՎԱԲԱ> ՍՊԸ առարկությունների քննարկման ընթացքում պարզվեց, որ ստուգման ակտի 3-րդ կետով արձանագրված խախտման միակ ապացույցը, ըստ էության, հանդիսանում է ստուգման ընթացքում՝ 25.01.2013 թ-ին, կազմված արձանագրությունը:

<հշատակված արձանագրությունում մասնավորապես նշվել է, որ. <Նշված ռեստորանային համալիրում առկա էր նաև մոտ 400 ք.մ. հանդիսությունների սրահ, որտեղ տեղադրված էին թվով 11 հատ 10 տեղանոց սեղաններ, որոնք մեր այցելության պահին չէին սպասարկվում և սպասքներով կահավորված չէին>:

Վերոգրյալից հետևում է, որ <ՎԱԲԱ> ՍՊԸ ռեստորանային համալիրում առկա 400 ք.մ. հանդիսությունների սրահի շահագործման վերաբերյալ որևէ դեպք ստուգման ընթացքում չի արձանագրվել:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում>:

Քննարկվող դեպքում <ՎԱԲԱ> ՍՊԸ նկատմամբ կազմված ստուգման ակտով առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ, հետևապես առկա է ընկերության համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության փաստը: Այսինքն, ստուգման ակտի 3-րդ կետով արձանագրված խախտման ապացուցման պարտականությունը կրում է ստուգող մարմինը, որը սակայն, արտոնագրային վճարների գծով լրացուցիչ պարտավորություններ է առաջադրել վերոգրյալ օրենսդրական նորմի պահանջների խախտմամբ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Իր հերթին, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. <Որպես կանոն, վարչական ակտն անվավեր է ճանաչվում ամբողջությամբ:

Վարչական ակտը մի մասով անվավեր կարող է ճանաչվել, եթե անվավեր չճանաչված մասը կարող է ուժի մեջ մնալ առանց անվավեր ճանաչված մասի:

Եթե վարչական ակտն անվավեր է ճանաչվել մի մասով, ապա սույն հոդվածի կանոնները կիրառվում են միայն դրա անվավեր ճանաչված մասի նկատմամբ>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<արկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Չ ՈՒ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 14.02.2013թ. թիվ 1104448 ստուգման ակտի 3-րդ կետը:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ